ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ANQA-2022/74

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 հոկտեմբերի 2022 թ. N 74

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝ «Մեսրոպ Մաշտոց Համալսարան» ՍՊԸ
Գործունեության հասցեն՝ Արցախի Հանրապետություն, ք. Ստեփանակերտ, Գ. Նժդեհ փող., 72
Նախորդ հավատարմագրման մասին որոշումը և ժամկետը՝ չի ունեցել

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով, «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2022թ.հոկտեմբերի 10-ին քննարկեց «Մեսրոպ Մաշտոց Համալսարան» ՍՊԸ-ի (այսուհետ՝ ՄՄՀ, Համալսարան, բուհ) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում	27 դեկտեմբերի 2019 թ.
ինքնավերլուծության ներկայացում	21 դեկտեմբերի 2021թ
փորձագիտական այցի իրականացում	02-05 մայիսի 2022 թ.
փորձագիտական զեկույցի ներկայացում	18 հուլիսի 2022 թ.
թերությունների վերացման նախնական ծրագրի ներկայացում	01 սեպտեմբերի 2022 թ.

ՄՈՒՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագիտական խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներից 2-ը՝ **«Կառավարում և վարչարարություն» և «Ենթակառուցվածք և ռեսուրսներ»,** գնահատվել են անբավարար:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով «Մեսրոպ Մաշտոց Համալսարան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը, զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ քոլեջի դիտողությունները և առաջարկությունները, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագիրը, լսելով քոլեջի փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երեք անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ուսումնական հաստատության ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև Հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

1. **Առկա են խնդիրներ և ռիսկեր որակավորումների արժանահավատ շնորհման տեսանկյունից, սակայն կան առաջխաղացման միտումներ և օրինակներ**

ՄՄՀ-ում գործող ՄԿԾ-ների առարկայական բովանդակությունը համապատասխանում է ՈԱՇ-ի պահանջներին և բուհի առաքելությանը: ՄՄՀ-ում սկսվել է ՄԿԾ-ների վերամշակում՝ բակալավրական ՄԿԾ-ների համար առկա են քարտեզագրումներ վերջնարդյունքների և ՈԱՇ-ի բնութագրիչների հետ, սակայն մագիստրոսական ՄԿԾ-ները դեռևս վերջնարդյունքահեն չեն, բացակայում են մասնագրերը: Որպես դրական փաստ պետք է նշել, որ որոշ կրթական ծրագրերում առկա են բազմազան դասավանդման մեթոդներ և ուսանողների անհատական առաջադրանքներ: ՄԿԾ-ները կազմելիս իրականացվել է տարբեր բուհերի ՄԿԾ-ների համեմատական վերլուծություն, սակայն դրանք փաստաթղթավորված չեն:

Թեև ՄԿԾ-ների իրականացման շրջափուլը դեռևս չի ավարտվել, սակայն իրականացվում է կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկում և հայտնաբերվել են որոշակի խնդիրներ, որոնք արդեն գտնվում են բարելավման փուլում:

ՄՄՀ-ի շրջանավարտների 37 % աշխատում է ըստ մասնագիտության, ինչը վկայում է իրենց պահանջված լինելը աշխատաշուկայում:

ՄՄՀ-ն ՊԴ կազմի կայունության պահպանման խնդիր ունի, ինչը պայմանավորված է մի շարք գործոններով, ինչպես օրինակ՝ այլ բուհերում աշխատանքի անցնելը, 44-օրյա պատերազմից հետո Արցախից մեկնելը և այլն:

ՊԴ կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները ձևակերպված չեն կոնկրետ կրթական ծրագրերի համար:

Աշխատելով բարդ պայմաններում՝ համալսարանը կարողանում է նաև իրականցնել ՊԴ կազմի վերապատրաստման գործընթաց, մեծ տեղ է հատկացնում առցանց դասախոսությունների կազմակերպմանը ՀՀ-ի և արտերկրի մասնագետների ներգրավմամբ:

Ուսանողների շրջանում անցկացված հարցումների արդյունքում ՊԴ կազմը բարձր է գնահատվել: Իրականացվում են դասալսումներ, որոնք հանդիսանում են կարիքների վերհանման հիմնական գործիք և դրանց միջոցով վերահսկվում է երիտասարդ դասախոսների մասնագիտական աճը, ինչպես նաև վեր են հանվում նրանց վերապատրաստման կարիքները:
Բուհը վարում է գիտական աստիճան և կոչում ունեցող դասախոսներին բարձր աշխատավարձով շահագրգռելու քաղաքականություն: Պատերազմի հետևանքով ի հայտ է եկել դասախոսական կազմի պակաս: Բուհը ունի ՊԴ կազմի համալրման, վերապատրաստման և գնահատման կարգեր: Սահմանված են դասախոսական կազմի պարբերաբար գնահատման ընթացակարգեր: Երիտասարդ դասախոսների համար նշանակվում են մենթորներ, իրականացվում դասալսումներ: Առկա են դասալսման հաշվետվությունները:
Ռեսուրսային բազան այս պահին չի կարող բավարար լինել ԿԾ-ի կազմակերպման համար:

2. ***Կառավարման համակարգը ձևավորման փուլում է, առկա են զարգացման միտումներ. կառավարման ու որակի ապահովման համակարգերը միտված են որակի բարելավմանը, որակավորումների արժանահավատ շնորհմանը:***

ՄՄՀ-ում բացակայում է արդյունավետության ցուցիչների վրա հիմնված ռազմավարական կառավարումը, ինչպես նաև ռիսկերի կառավարման համակարգը: Բուհը չի իրականացնում իր վրա ազդող գործոնների ուսումնասիրություն, այլ իրականացնում է իրավիճակային կառավարում:
2013թ.-ց սկսած բուհը թևակոխել է գործունեության կանոնակարգման նոր մակարդակ, առկա են գրեթե բոլոր գործառույթների կանոնակարգերը:
2019-2023թթ. ՌԾ-ն համապատասխանում է ՈԱԾ-ի պահանջներին և ղեկավարությունը առաջնորդվում է դրանով:
Բուհն ունի կրթական ու այլ նպատակների իրականացման համար որոշակի մարդկային ռեսուրսներ, սակայն վարչական անձնակազմի թվաքանակը սահմանափակ է և մի շարք գործառույթներով գերծանրաբեռնված: Նյութական և ֆինանսական ռեսուրսները խիստ սահմանափակ են, սակայն բուհը փորձում է հնարավորինս օգտագործել դրանք ռազմավարական նպատակների իրագործման համար:
Առկա են տվյալների հավաքագրման մեխանիզմներ, սակայն դեռևս դրանց արդյունավետության գնահատում չի իրականացվում:
Կառավարման համակարգը կարևորում է որակի ապահովման գործընթացները և արդեն իսկ բավականին ներդրում ունի այդ ուղղությամբ: Որակի ապահովման համակարգն աջակցում է կրթության որակի բարելավման գործընթացներին:

3. ***Միջազգայնացումն ու հետազոտական/ստեղծագործական գործունեությունը բավարար չեն աջակցում որակավորորումների արժանահավատ շնորհմանը.***

Հաշվի առնելով Արցախում առկա օբյեկտիվ հիմնախնդիրները՝ կարելի է փաստել, որ ՄՈՒՀ-ը գործուն քայլեր է ձեռնարկել հետազոտական, ստեղծագործական միջավայրը, միջազգայնացումը, արտաքին կապերը և շահակիցների հետ հետադարձ կապը զարգացնելու ուղղությամբ:
Բուհը չունի գիտահետազոտական ոլորտին առնչվող առանձին ռազմավարություն, սակայն իր ՌԾ-ում և դրա ներդրման պլանում հստակեցրել է գիտահետազոտական ոլորտում իր հետաքրքրությունը՝ գերակա ուղղություն ճանաչելով Կովկասագիտությունը, ինչը ՄՄՀ-ի նման համալսարանի համար կարևոր է, քանի որ հնարավորություն է տալիս կենտրոնացնել գիտական ներուժը և սակավ միջոցները: 2015թ-ին բացվել է Կովկասագիտության կենտրոնը, կրթական ծրագրերում ներդրվել է

«Հետազոտության մեթոդաբանություն» դասընթացը: Ինքնուրույն աշխատանքների ձևաչափով հետազոտական բաղադրիչ է ներառվել նաև տարբեր դասընթացներում:
2006 թվականից համալսարանում հրատարակվում է «Գիտական տեղեկագիր» գիտական հոդվածների ժողովածուն, որը ՀՀ ԲՈՀ-ի կողմից ընդգրկվել է ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ընդունելի պարբերական գիտական հրատարակությունների ցանկում:

Համալսարանում առկա է հաշվետվողականության մշակույթ, սակայն հաշվետվությունները գերազանցապես նկարագրողական են, փաստեր արձանագրող: Բուհն ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունն ապահովում է համալսարանի պաշտոնական կայքէջի, ֆեյսբուքյան էջի, տարբեր սոցիալական ցանցերի միջոցներով:
ՄՄՀ-ն կարևորում է հանրային ծառայությունների մատուցումը՝ մասնավորապես լրացուցիչ դասընթացների միջոցով: Բուհը պայմանագրեր ունի Կարմիր Խաչի և Արցախում գործող մի շարք այլ կազմակերպությունների հետ՝ մատուցելու լրացուցիչ ծառայություններ/դասընթացներ նրանց աշխատակիցների համար: Համալսարանը կարևորում է հասարակության կրթական, գիտական և մշակութային մակարդակի բարձրացումը: Իրականացվում են կարճաժամկետ դասընթացներ, արտաքին և ներքին շահակիցների կողմից:
ՄՄՀ-ը չունի արտաքին կապերի զարգացմանը և միջազգայնացմանը վերաբերող մշակված քաղաքականություն: Իր հիմնադրման օրվանից Համալսարանը ձգտել է արտաքին կապերի համակողմանի զարգացմանը և իր գործունեության միջազգայնացմանը: ՄՄՀ-ին հաջողվել է համագործակցության պայմանագրեր կնքել ՌԴ բուհերի, ինչպես նաև չճանաչված պետությունների բուհերի հետ:
Մինչև 2020 թվականի պատերազմը ՄՈՒՀ-ը համագործակցել է ՀԿԾՀ-ի (Հարավային Կովկասի շվեյցարական հիմնադրամ) հետ և միասին իրականացրել 13 համատեղ նախագիծ, ներառյալ օտարերկրյա մասնագետների ներգրավումը կրթական ծրագրերի մշակման ընթացքում, մոդուլային ծրագրերի այլընտրանքային դասընթացները, ուսանողների և անձնակազմի միջազգային գործուղումները, միջազգային գիտաժողովների կազմակերպումը:

ՄՈՒՀ-ն ունի ուսանողների հավաքագրման, ընդունելության հստակ մեխանիզմներ և՛ առկա, և՛ հեռակա ուսուցման համակարգերում, գործում են ուսանողների կրթական կարիքների վերհանման մեխանիզմներ: Ուսանողները խնդիրների դեպքում դրանք բարձրաձայնում են նաև համապատասխան ֆակուլտետային խորհուրդներում, դեկանների և ամբիոնների վարիչների հետ հանդիպումների ժամանակ:
Ուսանողներին խորհրդատվություն տրամադրվում է շաբաթական մեկ անգամ, սակայն դրանց իրականացման արդյունավետության գնահատում չի իրականացվել: Կարիերայի կենտրոնի տրամադրած տեղեկատվության վերաբերյալ իրազեկվածությունը դեռևս ցածր է:

4. Փորձագիտական զեկույցում նշված թերություններն առանցքային են որակավորումների արժանահավատ շնորհման տեսանկյունից, սակայն ստեղծված են հիմքեր բարելավումների համար:
5. Թերությունների վերացման ծրագիրը հիմնական ներառում է փորձագետների կողմից տրված խորհրդատվություններ: Ծրագիրն իրատեսական է և իրականացման դեպքում կբերի որակական բարելավումների:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. **«Մեսրոպ Մաշտոց Համալսարան» ՍՊԸ-ին շնորհել պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագրում 2 /երկու/ տարի ժամկետով:**
2. Հավատարմագրում շնորհելու մասին որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց՝ հաշվի առնելով **«Կառավարում և վարչարարություն» և «Ենթակառուցվածք և ռեսուրսներ»** ոլորտներում առկա խնդիրներին առաջնահերթ լուծում տալու անհրաժեշտությունը:
3. ***Հատուկ ուշադրություն դարձնել.***
   - Համալսարանի տեսլականի վերանայման անհրաժեշտությանը, այն դարձնելով առավել չափելի և հասանելի,
   - իրականացվող գործընթացների արդյունավետության գնահատման հստակ և չափելի որակական և քանակական ցուցիչներ ունենալու անհրաժեշտությանը,
   - ՄԿԾ-երում դասախոսներին ներկայացվող մասնագիտական գիտելիքների, հմտությունների և կարողությունների պահանջներ սահմանելու անհրաժեշտությանը,
   - հետազոտական աշխատանքների զարգացման և ընդլայնման երկարաժամկետ հեռանկարային ծրագիր ունենալու անհրաժեշտությանը,
   - հաշվետվողականության համակարգի բարելավմանը՝ դարձնելով այն առավել վերլուծական,
   - տվյալների հավաքագրման, արդյունքների վերլուծման և որոշումների կայացման գործընթացում դրանց կիրառմանը,
   - հետազոտական և ուսումնական գործընթացների փոխկապակցմանը, գործնական հմտությունների ձեռքբերմանը,
   - Համալսարանի բոլոր գործընթացներում ՊԻԳԲ շրջափուլի կիրառմանը,
   - ուսանողների մոտ վերլուծական, ստեղծագործական և քննադատական կարողությունների զարգացմանը միտված ուսուցման կազմակերպմանը:
4. «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգ»-ի 12-րդ կետի պահանջներին համապատասխան 6 (վեց) ամիսը մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով Համալսարանի գործունեության բարելավումները, նորարարություններն ու ձեռքբերումները:
5. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկել «Մեսրոպ Մաշտոց Համալսարան» ՍՊԸ-ի գործունեության արդյունավետությունն՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:

Հավատարմագրման Հանձնաժողովի նախագահ **Ա. Սաղյան**

2022 թ. հոկտեմբերի 31
ք.Երևան